

ԿԱՆՈՆԱԳԻՐ

ՈՒՍՈՒՄՆԱՍԵՐ ԱՐՄԵՆՈՒՅԵԱՅ

“ՍԱՆԴՈՒԽՏ” ԸՆԿ.

Հիմնեալ 1906 Սեպտեմբեր 9



ԳԱՀԻՐԷ

Տպ. Ս. ԴԱՐՐԻՆԵԱՆ

1906

ՄՆՊ


- ԳԱԶԻՐԷ -

ԿԱՆՈՆԱԳԻՐ

ՈՒՍՈՒՄՆԱՍԵՐ ԱՐՄԵՆՈՒՅԵԱՑ

“ՍԱՆԴՈՒԽՏ” ԸՆԿ.

Հիմնեալ 1906 Սեպտեմբեր 9



ԳԱԶԻՐԷ

Տպ. Ս. ԴՅՐՐԻՆՆԵԱՆ

1906



ԿԱՆՈՆԱԳԻՐ

ՈՒՍՈՒՄՆԱՍԵՐ ԱՐՄԵՆՈՒՅԵԱՅ

“ՍԱՆԴՈՒԽՏ” ԸՆԿ.

Հիմնեալ 1906 Սեպտեմբեր 9

ՆՊԱՏԱԿ

Յօդ. 1 — Ընկերութեանս նպատակն է համեստ սահմանի մէջ ծառայել ազգիս իգական սեռի զարգացման, Մայր-Երկրի մէջ աղքատ օրիորդաց դաստիարակութեան օգնելով: Իսկ ապագային Հայաստանի մէկ գիւղին կամ գաւառին մէջ ունենալ օրիորդաց մասնաւոր վարժարան մը:

ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՔ

Յօդ. 2 — Ընկերութեանս անդամ կ'ընդունուին Հայ օրիորդները իսկ իբր համակիր կ'ընդունուին Հայ տիկիները, վճարելով ամսական երեք զրշ. ողջ իւրաքանչիւր բաժնեգնի համար :

Յօդ. 3 — Ընկերութեանս անդամակցիլ փափաքողք գրաւորապէս կամ անձամբ կը ներկայանան Գործ. Ժողովոյ Ատենապետին, որ ընկերուհիներու հետ խորհրդակցելով կը որոշէ ընդունելութիւնը :

Յօդ. 4 — Ընկերութեանս անդամուհիք պարտին աշխատիլ անոր յառաջդիմութեան իրենց հնարաւոր միջոցներով: Նոյնպէս պարտին ներկայ գտնուիլ Ընդհ. Ժողովներու և կանոնաւորապէս վճարել խոստացուած բաժնեգինները :

Յօդ. 5 — Այն անդամուհին, որ
երեք ամիս յաջորդաբար չ'է վճա-
րած իր բաժնեգինը, Գործ. Ժողովոյ
կողմանէ ազդարարագիր մը կ'ստա-
նայ և երբ զայդ անպատասխան
թողու. դադարեալ կը նկատուի :

Յօդ. 6 — Դադարեալ անդամու-
հի մը, երբ ուզէ վերսկսիլ իւր ան-
դամակցութիւնը, պարտի անթերի
վճարել նախկին բաժնեգինները և
ենթակայ է անդամակցութեան մա-
սին կանոնադրի տրամադրութեանց :

ՀԱՍՈՅՅԻ ԱՂԲԻՒՐՆԵՐ

Յօդ. 7 — Ընկերութեանս հա-
սոյթի ազրիւրներն են՝

Ա. — Անդամուհեաց բաժնեգիւններն,

Բ. — Գուրսէն եկած նուէրներ,

Գ. — Ընդհանուր հանգանակութիւններ,

Դ. -- Հանդեսներ եւ երեկոյթներ,

- Ե. — Թասերական ներկայացումներ,
Զ. — Վիճակահանութիւններ,
Է. — Գրքերու հրատարակութիւններ,

Յօդ. 8 — Ընկերութեանս բարե-
րար կ'արձանագրուին այն անձինք՝
որք մի անգամէ կարևոր գումար մը
կը նուիրեն Ընկերութեանս, բայց ոչ
պակաս քան (50) յիսուն եգիպ. ոսկի:

ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

Յօդ. 9 — Ընկերութեանս Վար-
չական Մարմինը կը բաղկանայ Ընդհ.
Ժողովոյ Դիւանէն և Գործ. Ժողովէն:

Յօդ. 10 — Ընկերութեանս Ընդհ.
Ժողովին անգամ՝ կը նկատուին և
անոր մէջ ձայն կ'ունենան միմիայն
բաժնեգին վճարող ընկերուհիներն,
որոնք գազանի քուէարկութեամբ
կ'ընտրեն Դիւանը, որ կը բաղկանայ
Ատենապետէ մը և Ատենագպրէ մը:

Յօդ. **11** — Գիււանի պարտակա-
նութիւնն է համարառու ըլլալ Գործ.
Ժողովէն և ամէն երեք կամ վեց
ամիսն անգամ մը Ընդհանուր Ժողով
գումարել և ներկայացնել հաշուե-
կշիռն: Ստիպողական պարագաներու
տակ իրաւունք ունի արտակարգ
Ժողով գումարել:

Յօդ. **12** — Ընդհանուր Ժողովք
կը դադրեցնէ պաշտօնէ ո՛ր և է ան-
դամուհի մը երբ սա թերի գտնուի
իւր պաշտօնավարութեան մէջ և հա-
կառակ գործէ կանոնագրի տրամա-
գրութեանց:

ԳՈՐԾ. ԺՈՂՈՎ

Յօդ. **13** — Գործադիր Ժողովը
կը բաղկանայ հինգ անձերէ՝ որք
կ'ընտրուին Ընդհ. Ժողովէն գաղանի-
քուէարկութեամբ և որոնք իրենց

մէջ, նոյնպէս գաղտնի քուէով կ'ընտ-
րեն, ատենապետ մը, ատենագիր
մը, գանձապահ մը և երկու խոր-
հրդականներ :

Յօդ. 14 — Գործ. ժողովը պիտի
ունենայ Ընկերութեանս կնիքը և
կանոնաւոր տումարները՝ ուր ամէն
նիստերու որոշումները և իրեն հաշ-
ուական գործառնութիւնները պէտք
է արձանագրուին ու կնքուին :

Ընկերութեանս ամէն կարգի հա-
սոյթները կը գանձուին տպեալ և
բուն ունեցող ընկալագրերով, որ կը
կրեն Գործ. ժողովոյ ատենապետի,
գանձապահի ստորագրութիւններն
և Ընկերութեան կնիքը :

Յօդ. 15 — Գործ. ժողովոյ որո-
շումներն առանց մեծամասնութեան
անընդունելի են. եթէ ու է խնդիր
լուծելու մասին դժուարութեան հան-

գիպի պարտի Ընդհ. ժողովոյ Գիւ-
ւանին գիմել և անոր որոշմամբ
գործել :

Յօդ. **16** — Գործ. ժողովը պարտի
Ընկերութեան անուան պատկանեալ
գրամէն միայն երեք հարիւր զրչ. ողջ
պահել գանձապետին քով, իսկ մնա-
ցածը յանձնել ապահով գրամատուն
մը ընկերութեան անուամբ : Այդ
գումարը կամ անոր որեէ մասը գրա-
մատունէն կրնայ ստացուիլ միմիայն
ատենապետի և գանձապահի ստու-
րագրութիւններով և Ընկերութեան
կնիքով : Գործ. ժողովն գրաւորապէս
Ընդհ. ժողովոյ Գիւանին պիտի հա-
ղորդէ թէ գրամը ս՞ր գրամատունն
յանձնուած է և ի՞նչ քանակութեամբ :

Յօդ. **17** — Գործ. ժողովը պարտի
Ընկերութեան վերաբերեալ ծախ-
քերու համար ունենալ կանոնաւոր
ստացագիրներ :

Յօդ. 18 — Գործ, ժողովոյ պարտականութիւնն է ամէն տարի Ընկերութեան կողմէ յատկացուած դրամական նպաստը ուղարկել որոշեալ վարժարանին, տեղւոյս առաջնորդարանի միջոցաւ :

Յօդ. 19 — Վարչական մարմնոյ անդամք մէկ տարի պաշտօն կը վարեն և վերընտրելի են, եթէ Ընդհ. ժողովը պահանջէ :

ԼՈՒԾՈՒՄՆ ԸՆԿԵՐՈՒՅԵԱՆ

Յօդ. 20 — Ընկերութիւնս իւր գոյութիւնը կը պահէ ցորչափ ունի տասն անդամուհի, իսկ երբ անոնք ևս դադրին գործելէ, այդ պարագային Ընկերութեանս գոյքն ու դրամը պիտի տրուի իւր ունեցած վարժարանին :

Յօդ. 21 — Ընկերութեանս ներկայ կանոնադիրը կրնայ վերաքննութեան ենթարկուիլ, Ընդհ. ժողովոյ որոշմամբ միայն. Ընկերութեան նըպատակը անփոփոխ պահելով :



